ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ **2022 թ. հունիսի 30**-ին տեղի ունեցած թիվ 10 նիստի

ՀՀ, ք. Երևան 30.06.2022 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկությամբ ներկայացված օրակարգով և ժամանակացույցով 2022 թ. հունիսի 30-ին տեղի ունեցավ ԵՊՀ գիտական խորհրդի թիվ 10 նիստը: Նիստին մասնակցեցին գիտական խորհրդի 88 անդամներից 69-ը (կից ներկայացվում է ցուցակը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Մերի Հովհաննիսյանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ ԵՊՀ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
2. Ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան):
3. Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայի ու հայցորդության վարձավճարի չափի սահմանում ու հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տ. Գալստյան):
4. Երևանի պետական համալսարանի նախապատրաստական լրացուցիչ դասընթացների վճարաչափի սահմանում ու հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տ. Գալստյան):
5. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ինովացիոն կառավարում» մագիստրոսական նոր կրթական ծրագրի՝ 2022/2023 ուստարվա վարձավճարի չափի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տ. Գալստյան):
6. «ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանման օրինակելի կանոնադրության» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան):

7. ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատում (զեկ.՝ ԵՊՀ իրավաբանական ծառայության պետ Ա. Ա. Թադևոսյան).

1) «Երևանի պետական համալսարանում շահերի բախման բացահայտման և սահմանափակման կանոնակարգի» հաստատում:
2) «Երևանի պետական համալսարանի ուսումնամեթոդական վարչություն» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրության հաստատում:
3) «Երևանի պետական համալսարանի ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրության հաստատում:
4) «Երևանի պետական համալսարանի ընդհանուր բաժին» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրության հաստատում:
5) «Երևանի պետական համալսարանի գնումների վարչություն» կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրության հաստատում:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

8. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարման հաշվետվությունների (2021 թ.) և անկախ աուդիտորի եզրակացության ներկայացում (զեկ.՝ ԵՊՀ գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյան):
9. ԵՊՀ մագիստրոսական նոր ու վերանայված կրթական ծրագրերի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ԳԽ որակի ապահովման հանձնաժողովի նախագահ Է. Գևորգյան):
10. Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մ. Ապրեսյանի, դոցենտներ Ա. Ոսկանյանի, Ս. Ասիկյանի, Լ. Մնացականյանի, Ք. Մկրտչյանի և դասախոս Ա. Այվազյանի հեղինակած «English 4 Law» վերնագրով բուհական դասագիրքը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես բուհական դասագիրք հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ գիտքարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան):
11. Անգլերենի թիվ 1 ամբիոնի դոցենտ Ե. Մարգարյանի հեղինակած «English in Science» վերնագրով բուհական դասագիրքը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես բուհական դասագիրք հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ գիտքարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան):
12. Արաբագիտության ամբիոնի դասախոսներ բ.գ.թ., դոցենտ Սոնա Տոնիկյանի և Սեդրակ Հրայր Միքայել Հովսեփյանի «Սովորում ենք արաբերեն (սկսնակ

երկրորդ (Ա2) մակարդակ)» բուհական դասագիրքը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես բուհական դասագիրք հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ գիտքարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան):

13. Հայազգի գործարար, բարերար և գիտնական Նուբար Աֆեյանին «ԵՊՀ պատվավոր դոկտորի» կոչում շնորհելու հարցը (զեկ.՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան Է. Գևորգյան):

Նիստը նախագահող Հ. Հովհաննիսյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին՝ առաջարկելով հաստատել նիստի օրակարգը: Բաց քվեարկությամբ հաստատվեց նիստի օրակարգը:

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին: Նիստի առաջարկված օրակարգը հաստատելուց հետո ԵՊՀ գիտխորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ Պողոս Վարդևանյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում շնորհելու երկու հայցերը՝ փաստելով, որ ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են պահանջվող չափորոշիչներին և երաշխավորվել են հանձնաժողովի կողմից: Ըստ այդմ՝ դոցենտի պաշտոնի երկու հավակնորդներ ստացել են դրական երաշխավորություն ու ներկայացվել ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը: Պ. Վարդևանյանը հավելեց, որ հանձնաժողովը ստացել է նաև պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու մեկ հայց, որի քննարկումը հետաձգվել է ներկայացված աշխատությունների չափորոշչային որոշ պահանջներ հստակեցնելու նպատակով:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ Գայանե Լեյնադի Դանիելյանը և Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ Սաթենիկ Լևոնի Զուգասզյանը:

Ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Ժակ Մանուկյան (նախագահ),
2. Դավիթ Հովհաննիսյան,
3. Արուսյակ Գրբոյան:

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 69 անդամներից 69-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ս. Վարդապետյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները: Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Դանիելյան Գայանե Լեյնադի	65	2	2
2.	Չուգասզյան Սաթենիկ Լևոնի	58	8	3

Որոշվեց.

դիմել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

2. Ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում:

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումները: Հայտարարվեց փակ գաղտնի քվեարկություն: Օրակարգային հարցերի սպառումից հետո հաշվիչ հանձնաժողովը հայտարարեց քվեարկության արդյունքները.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ
1.	Պետրոսյան Պետրոս Աշոտի	Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ	01.07.2022 թ.
2.	Մակարյան Արմեն Հովհաննեսի	Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ	01.07.2022 թ.
3.	Ջիլավյան Սամվել Հակոբի	Մեխանիկայի ամբիոնի վարիչ	01.07.2022 թ.
4.	Մկրտչյան Մարինե Սարգսի	Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի վարիչ	01.07.2022 թ.

5.	Ալեքսանյան Աշոտ Սեյրանի	Քաղաքագիտության ամբիոնի վարիչ	01.07.2022 թ.
6.	Զոհրաբյան Էդուարդ Լենդրուշի	Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ	01.07.2022 թ.
7.	Ոսկանյան Վարդան Ստեփանի	Իրանագիտության ամբիոնի վարիչ	01.09.2022 թ.
8.	Քոչարյան Հայկ Մկրտիչի	Արաբագիտության ամբիոնի վարիչ	01.09.2022 թ.
9.	Աբաջյան Աննա Հենրիկի	Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ	01.07.2022 թ.
10.	Մարտիրյան Նաիրա Իգնատիոսի	Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ	01.07.2022 թ.

Որոշվեց.
հաստատել ամբիոնի վարիչ ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված ամբիոնի ներքոհիշյալ վարիչների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3. Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայի ու հայցորդության վարձավճարի չափի սահմանում ու հաստատում:

ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տիգրան Գալստյանը ներկայացրեց ասպիրանտուրայի ու հայցորդության վարձավճարների չափը: Ըստ ներկայացված նախագծի՝ ԵՊՀ առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի բոլոր մասնագիտությունների համար վարձավճարի չափը սահմանվեց 650 հազար դրամ, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 500 հազար դրամ: Հայցորդների համար էլ վարձավճարի չափը սահմանվեց 500 հազար դրամ: ԵՊՀ հիմնական աշխատող և առկա ուսուցմամբ սովորող ասպիրանտների համար վարձավճարի չափ սահմանվեց 325 000 դրամ, համապատասխանաբար հեռակա ուսուցմամբ սովորողների ու հայցորդների համար՝ 250 000 դրամ:

Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայի ու հայցորդության վարձավճարի չափի սահմանման ու հաստատման հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

1. **ԵՊՀ առկա ուսուցմամբ ասպիրանտուրայում բոլոր մասնագիտությունների համար վարձավճարի չափ սահմանել 650 000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:**
2. **ԵՊՀ հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայում բոլոր մասնագիտությունների համար վարձավճարի չափ սահմանել 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:**
3. **ԵՊՀ հայցորդների համար վարձավճարի չափ սահմանել 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:**
4. **ԵՊՀ հիմնական աշխատող և առկա ուսուցմամբ սովորող ասպիրանտների համար վարձավճարի չափ սահմանել 325 000 (երեք հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ:**
5. **ԵՊՀ հիմնական աշխատող և հեռակա ուսուցմամբ սովորող ասպիրանտների համար վարձավճարի չափ սահմանել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:**
6. **ԵՊՀ հիմնական աշխատող հայցորդների համար վարձավճարի չափ հաստատել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:**

4. Երևանի պետական համալսարանի նախապատրաստական լրացուցիչ դասընթացների վճարաչափի սահմանում ու հաստատում:

ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տիգրան Գալստյանը առաջարկեց ԵՊՀ-ում կազմակերպվող նախապատրաստական դասընթացների յուրաքանչյուր առարկայի 120 ժամ դասավանդման արժեքը սահմանել 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Ինչպես նշվեց, վերլուծություն է կատարվել շուկայում համանման ծառայություններ մատուցող տնտեսավարողների գնային քաղաքականության ու մատուցվող ծառայությունների ժամկետների վերաբերյալ, որոնց արդյունքներով դասավանդվող մեկ առարկայի համար սահմանված ամսական վճարը մոտարկված չէ մասնավոր հատվածում նմանատիպ ծառայություններ մատուցողների կողմից սահմանած շուկայական արժեքներին (շուրջ 40-50 տոկոս ցածր գին է սահմանված), միաժամանակ հաշվի է առնվել նաև այն, որ մասնակիցներին որպես արտոնություն տրամադրվում է նաև ԵՊՀ հեռակա ուսուցման համակարգում առանց ընդունելության քննությունների ուսումնառելու հնարավորության հավաստագիր: Հիմքում ունենալով հաշվարկները և առաջնորդվելով ԵՊՀ տնտեսական ու ֆինանսական շահով՝ առաջարկվեց սահմանել խմբերում մասնակիցների նվազագույն թվաքանակ, որը կապահովի առաջնային ինքնարժեքի ծախսածածկույթը:
Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել առաջարկվող փոփոխությունը և ԵՊՀ-ում կազմակերպվող նախապատրաստական դասընթացների յուրաքանչյուր առարկայի 120 ժամ դասավանդման արժեքը սահմանել 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

5. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ինովացիոն կառավարում» մագիստրոսական նոր կրթական ծրագրի՝ 2022/2023 ուստարվա վարձավճարի չափի հաստատում:

Տ. Գալստյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց նաև ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ինովացիոն կառավարում» մագիստրոսական նոր կրթական ծրագրի՝ 2022-2023 ուստարվա վարձավճարի չափը, որը հավանության արժանացավ և միաձայն ընդունվեց ԳԽ-ի կողմից:

«Ինովացիոն կառավարում» մագիստրոսական նոր կրթական ծրագրի՝ 2022/2023 ուստարվա վարձավճարի չափի հաստատման հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ինովացիոն կառավարում» մագիստրոսական նոր կրթական ծրագրի 2022/2023 ուստարվա վարձավճարի չափը: Առկա ուսուցման դեպքում այն կազմելու է 900 հազար դրամ, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 720 հազար դրամ:

6. «ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանման օրինակելի կանոնադրության» հաստատում:

ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը ԳԽ հաստատմանը ներկայացրեց «ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանման օրինակելի կանոնադրությունը», որը քննարկվեց և հավանության արժանացավ: Նշված առաջարկով էլ «ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանման օրինակելի կանոնադ-ությունը» դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել Երևանի պետական համալսարանի գիտահետազոտական ստորաբաժանման օրինակելի կանոնադրությունը:

7.ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստա-տում:

ԵՊՀ իրավաբանական ծառայության պետ Արմեն Թադևոսյանը գիտական խորհրդի քննարկմանը ներկայացրեց «Երևանի պետական համալսարանում շահերի բախման բացահայտման և սահմանափակման» կանոնակարգը և ԵՊՀ կառուցվածքային մի շարք ստորաբաժանումների («Երևանի պետական համալսարանի ուսումնամեթոդական վարչություն», «Երևանի պետական համալսարանի ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոն», «Երևանի պետական համալսարանի ընդհանուր բաժին», «Երևանի պետական համալսարանի գնումների վարչություն») կանոնադրությունները:

7.1. «Երևանի պետական համալսարանում շահերի բախման բացահայտման և սահմանափակման» կանոնակարգի հաստատում:

Նախ ներկայացվեց «Երևանի պետական համալսարանում շահերի բախման բացահայտման և սահմանափակման» կանոնակարգը, որը ներառում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի աշխատողների, գործընկերների, թափուր պաշտոնների հավակնորդների հետ հարաբերություններում շահերի հնարավոր բախման բացահայտման և դրա սահմանափակման կարգն ու պայմանները: Ա. Թադևոսյանը մանրամասն հիմնավորեց նշված կանոնակարգի անհրաժեշտությունը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել «Երևանի պետական համալսարանում շահերի բախման բացահայտման և սահմանափակման» կանոնակարգը:

7.2. ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության կանոնադրության հաստատում:

ԵՊՀ իրավաբանական ծառայության պետ Արմեն Թադևոսյանը ներկայացրեց Ուսումնամեթոդական վարչության կանոնադրությունը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության կանոնադրությունը:

7.3. ԵՊՀ ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կանոնադրության հաստատում:

ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացվեց նաև Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կանոնադրությունը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել ԵՊՀ ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կանոնադրությունը:

7.4. ԵՊՀ ընդհանուր բաժնի կանոնադրության հաստատում:

ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացվեց Ընդհանուր բաժնի կանոնադրությունը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել ԵՊՀ ընդհանուր բաժնի կանոնադրությունը:

7.5. ԵՊՀ գնումների վարչության կանոնադրության հաստատում:

ԵՊՀ իրավաբանական ծառայության պետ Արմեն Թադևոսյանը ներկայացրեց Գնումների վարչության կանոնադրությունը: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել ԵՊՀ գնումների վարչության կանոնադրությունը:

Նախքան ընթացիկ հարցերին անցնելը ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց Կատար ու Իրան կատարած այցելությունների արդյունքները, որոնց շրջանակում տեղի են ունեցել բազմաթիվ հանդիպումներ ու քննարկումներ՝ միտված փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցային ծրագրերի իրագործմանն ու նոր կապերի հաստատմանը:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

8.«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարման հաշվետվությունների (2021 թ.) և անկախ աուդիտորի եզրակացության ներկայացում:

ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տիգրան Գալստյանը զեկուցեց ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողականը (2021 թ.)՝ փաստելով, որ այն պրոֆիցիտային է: Տ. Գալստյանը տեղեկացրեց նաև, որ

խնայողությունների հաշվին որոշում է կայացվել, ըստ որի՝ հուլիսին կամ օգոստոսին ԵՊՀ աշխատակիցները ստանալու են դրամական պարգևատրում՝ հիմնական աշխատավարձի 50 տոկոսի չափով: Հ. Հովհաննիսյանն էլ հավելեց, որ որոշում է կայացվել նաև սեպտեմբերից 10 տոկոսով բարձրացնելու պրոֆեսորների, իսկ հունվարից՝ բոլոր աշխատողների աշխատավարձը: Ռեկտորի տեղեկացմամբ որոշումը հաստատվել է ՀԽ-ի կողմից:

9.ԵՊՀ մագիստրոսական նոր ու վերանայված կրթական ծրագրերի հաստատում:

ԵՊՀ ԳԽ որակի ապահովման հանձնաժողովի նախագահ Էմիլ Գևորգյանը ներկայացրեց մագիստրոսական նոր և վերանայված կրթական ծրագրերի հաստատման հարցը՝ փաստելով, որ ներկայացվող կրթական 4 ծրագրերն անցել են սահմանված ընթացակարգի բոլոր փուլերով ու համապատասխանում են պահանջվող չափորոշիչներին: Նրա խոսքով Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետից ներկայացվել է 2 ծրագիր՝ «Գործարար վարչարարություն (կառավարում)» և «Ֆինանսներ»: Վերջինը, ըստ Է. Գևորգյանի, նոր ծրագիր է՝ 1.5 տարի տևողությամբ, իսկ մյուսը գործող ծրագրի վերանայված տարբերակն է, որի իրականացման ժամկետը 2 տարվա փոխարեն դարձել է 1.5 տարի: Վերանայվել են նաև Ռուս բանասիրության ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագիրը, որն առաջարկվում է 2 տարվա փոխարեն իրականացնել 1 տարում, և Քիմիայի ֆակուլտետի «Սննդի անվտանգություն» կրթական ծրագիրը, որն էլ առաջարկվում է 2 տարվա փոխարեն իրականացնել 1.5 տարում:

ԵՊՀ մագիստրոսական նոր ու վերանայված կրթական ծրագրերի հաստատման հարցը դրվեց քվերակության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0): Ներկայացված առաջարկները հաստատվեցին ԳԽ-ի կողմից:

Որոշվեց.
հաստատել Երևանի պետական համալսարանի մագիստրոսի ներքոնշյալ կրթական ծրագրերը.

Թիվ	Կրթական ծրագրի անվանումը	Կրթական ծրագրի մակարդակը	Նոր/ Վերանայված	Տևողությունը (հին/նոր)	Ուսուց-ման ձևը	Ֆակուլտետ
1.	Գործարար վարչարարություն (կառավարում)	Մագիստ.	Վերանայված	2-ից անցում 1.5 տարվա	Առկա	Տնտեսագիտության և կառավարման
2.	Ֆինանսներ	Մագիստ.	Նոր	1.5 տարի	Առկա	Տնտեսագիտության և կառավարման
3.	Ռուսաց լեզու և գրականություն	Մագիստ.	Վերանայված	2-ից անցում 1 տարվա	Առկա	Ռուս բանասիրության
4.	Սննդի անվտանգություն	Մագիստ.	Վերանայված	2-ից անցում 1.5 տարվա	Առկա	Քիմիայի

10.Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մ. Ապրեսյանի, դոցենտներ Ա. Ոսկանյանի, Ս. Ասիկյանի, Լ. Մնացականյանի, Ք. Մկրտչյանի և դասախոս Ա. Այվազյանի հեղինակած «English 4 Law» վերնագրով բուհական դասագիրքը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես բուհական դասագիրք հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

«English 4 Law» վերնագրով բուհական դասագիրքը (հեղ.՝ Մ. Ապրեսյան, Ա. Ոսկանյան, Ս. Ասիկյան, Լ. Մնացականյան, Ք. Մկրտչյան և Ա. Այվազյան) որպես բուհական դասագիրք երաշխավորել վերահրատարակության և միջնորդել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ սույն աշխատությունը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում:

11.Անգլերենի թիվ 1 ամբիոնի դոցենտ Ե. Մարգարյանի հեղինակած «English in Science» վերնագրով բուհական դասագիրքը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես բուհական դասագիրք հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

«English in Science» վերնագրով բուհական դասագիրքը (հեղ.՝ Ե. Մարգարյան) որպես բուհական դասագիրք երաշխավորել վերահրատարակության և միջնորդել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ սույն աշխատությունը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում:

12.Արաբագիտության ամբիոնի դասախոսներ բ.գ.թ., դոցենտ Սոնա Տոնիկյանի և Սեդրակ Հրայր Միքայել Հովսեփյանի «Սովորում ենք արաբերեն (սկսնակ երկրորդ (Ա2) մակարդակ)» բուհական դասագիրքը հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն որպես բուհական դասագիրք հաստատելու միջնորդություն ներկայացնելու հարցը:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

«Սովորում ենք արաբերեն (սկսնակ երկրորդ (Ա2) մակարդակ)» վերնագրով բուհական դասագիրքը (հեղ.՝ Սոնա Տոնիկյան և Սեդրակ Հրայր Միքայել Հովսեփյան) որպես բուհական դասագիրք երաշխավորել վերահրատարակության և միջնորդել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ սույն աշխատությունը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում:

Ընթացիկ հարցերի քննարկումների ժամանակ հնչեցին տարբեր դիտարկումներ ու պարզաբանումներ:

13.Հայազգի գործարար, բարերար և գիտնական Նուբար Աֆեյանին «ԵՊՀ պատվավոր դոկտորի» կոչում շնորհելու հարցը:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան Էմիլ Գևորգյանը գործընկերներին առաջարկեց, հավատարիմ մնալով ԵՊՀ-ում ձևավորված ավանդույթներին, «ԵՊՀ պատվավոր դոկտորի» կոչում շնորհել հայազգի հայտնի գործարար, բարերար, գիտնական ու դասախոս Նուբար Աֆեյանին: Է. Գևորգյանը, ներկայացնելով կենսագրական ուշագրավ փաստեր, նշեց, որ շուտով լրանալու է Ն. Աֆեյանի 60-ամյակը, ինչը հիանալի առիթ է գնահատելու նրա գործունեությունը: Առաջարկությունն ընդգրկվեց օրակարգի ընթացիկ հարցերի թվում՝ միաձայն հաստատվելով (կողմ՝ 69, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հայազգի գործարար, բարերար և գիտնական Նուբար Աֆեյանին շնորհել «ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում»:

Ընթացիկ հարցերի քննարկումների ժամանակ հնչեցին տարբեր դիտարկումներ ու պարզաբանումներ: Օրակարգային հարցերի սպառումից հետո Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանն առաջարկեց ձևավորել աշխատանքային խումբ, որը կքննարկի ԵՊՀ նախկին ռեկտոր Արամ Սիմոնյանի հիշատակին նվիրված որևէ քայլ իրականացնելու առաջարկները: Պատասխանելով Ռ. Մելքոնյանին՝ ԵՊՀ ռեկտորն ասաց, որ կքննարկվի առաջարկը, գիտքարտուղար Մերի Հովհաննիսյանն էլ հավելեց, որ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտխորհուրդը հրավիրելու է նիստ՝ քննարկելու Ա. Սիմոնյանի հիշատակին նվիրված տարբեր միջոցառումներ կազմակերպելու հարցեր:

Նիստի ավարտին ձևավորված հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ժակ Մանուկյանը ներկայացրեց քվեարկությունների արդյունքները, ըստ որոնց՝ ԳԽ-ն հաստատեց ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումները, ինչպես նաև բավարարեց դոցենտության երկու հայտերը:

Գիտական խորհրդի նախագահ՝ Հ. Վ. Հովհաննիսյան

30.06.2022 թ.